Ավետիք Իսահակյան

Հովհաննես Բաղրամյանին, 1955թ . , դեկտեմբերի վերջ

Մեծարգո և շատ սիրելի Հովհաննես Խրիստաֆորովիչ.
Ամենից առաջ շնորհավորում եմ Ձեր նոր տարին, ցանկանալով Ձեզ երկար և առողջ կյանք, նորանոր հաջողություններ ի փառս մեր մեծ հայրենիքի: Հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը այն գեղեցիկ հեռագրի համար, որով պատվեցիք ինձ իմ հոբելյանի առթիվ:
Շատ ներողություն եմ խնդրում՝ Ձեզ մի պահ զբաղեցնելուս համար:
Այս գրությունս բերողը X.X., իմ բարեկամն է, խնդրում եմ բարի լինեք նրան ընդունելու և լսելու նրան, և ինչքան հնարավոր է, ընդառաջեք նրան: